

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ ЕРЕВАНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА**

Քիմիա և կենսաբանություն

1, 2012

Химия и биология

Կենսաբանություն

УДК 612.821.3

**ՍՐԾԻ ՈՒԹ-ՄԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾՈՒԹՅԱՆ
ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ**

Ս. Ս. ՄԻՆԱՍՅԱՆ, Է. Ս. ԳԵՎՈՐԳՅԱՆ*, ՌԵԶԱ ԳՈԼԻՍՅԱՐԴԻ

ԵՊՀ Տ. Մոլեկուլար անվան մարդու և կեղանիների ֆիզիոլոգիայի ամբիոն, Հայաստան

Բանայի բառեր. սրտի ռիբմ, վարիացիոն պուլսաչափում, ուսումնական ծանրաբեռնվածություն, ինտրավերտ, էքստրավերտ:

Դպրոցի զարգացման ժամանակակից փուլում արդիական է կրթական տարրեր հաստատություններում (ինովացիոն՝ ճեմարան, քոլեջ, տաղանդավոր երեխանների ուսուցման թեքումնվ դպրոց և ավանդական՝ հանրակրթական դպրոց) սովորող աշակերտների առողջական վիճակի և ֆիզիոլոգիական փունկցիաների ուսումնասիրությունը: Ժամանակակից հանրակրթական դպրոցը բարձր պահանջներ ներկայացնելով սովորողներին, համալիրային այնպիսի գործուներ է ստեղծում, որոնք բացասական ազդեցություն են քողնում աշակերտների առողջության և կյանքի ձևավորման վրա [1–3]: Դրա հետևանքով զգայի չափով վատրարացել է երեխանների և դեռահասների առողջական վիճակը, տարրեր բնույթի հիվանդություններով հիվանդանալը, ֆիզիկական զարգացման և պատրաստվածության մակարդակի իջեցումը թեր- և սակավաշարժության փոնի վրա [4–5]: Հանրակրթական դպրոցի համեմատությամբ ինովացիոն դպրոցներում ուսուցումն ունի մի շարք առանձնահատկություններ. մասնաճյուղերի խորացված ուսուցում, հավելյալ անհատական և ֆակուլտատիվ պարապմունքներ, հագեցած ուսումնական ծրագրեր, հանգստին և քնին տրամադրվող ժամերի կրծատում, առաջարկմության մշտական հսկողություն և այլն: Նման ինովացիոն ծրագրերն ու մերոդներն էապես մեծացնում են սովորողների տեղեկատվական և հոգեբանական ծանրաբեռնվածությունը, սրբեսածին ազդեցություն քողնում օրգանիզմի ձևաբանագործառությային ցուցանիշների վրա ու փոխում «ազդեցության էկոլոգիան»: Այս ամենը կարևորում է բժիշկների, ֆիզիոլոգների, հոգեբանների և մանկավարժների ուշադրության բևեռումը վերոհիշյալ հարցերի ուսումնասիրությանը [6]:

Ուսումնական գերծանրաբեռնվածությանն առավել արագ արձագանքում է սիրտ-անորթային համակարգը [7–9]: Ըստ որոշ հեղինակների, սիրտանորթային համակարգն առավել զգայուն է ներքին և արտաքին ազդեցու-

* E-mail: anatom@ysu.am

թյունների նկատմամբ և ակտիվորեն մասնակցում է օրգանիզմի հարմարողական գործընթացներին, ապահովելով ներքին միջավայրի կայունությունը [10–12]: Ուսումնական ծանրաբեռնվածության հանդեպ սիրտ-անոթային համակարգի զգայությունը որոշվում է գենետիկական մեխանիզմներով, կենտրոնական նյարդային համակարգի (ՎՆՀ) վիճակով և սիմպարոադրենալային մեխանիզմներով [10, 13]:

Ուսումնական ծանրաբեռնվածության պայմաններում, սիրտ-անոթային համակարգի առավել հարմար և տեղեկատվական ուսումնասիրնան եղանակը՝ սրտի ռիթմի վերլուծությունն է: Սրտի ռիթմի փոփոխությունն՝ ամբողջական օրգանիզմի համընդհանուր ռեակցիան է արտաքին աշխարհի յուրաքանչյուր ազդակի նկատմամբ: Սակայն, ավանդական ձևով չափվող սրտի կծկումների հաճախության միջին արժեքը հիմնականում արտահայտում է արյան շրջանառության վրա ազդող բազմաթիվ կարգավորող ազդեցությունների վերջնական արդյունքը և բնութագրում է արդեն կազմավորված հոմեոստազային մեխանիզմի առանձնահատկությունները: Այդ մեխանիզմի կարևոր օղակներից մեկն ապահովում է վեգետատիվ նյարդային համակարգի (ՎՆՀ) սիմպարիկ և պարասինվածքիկ բաժինների միջև եղած հավասարակշռությունը (վեգետատիվ հոմեոստազ): Սրտի ռիթմի մաթեմատիկական վերլուծության միջոցով ստացվում են կարգավորող համակարգերի մի շարք ցուցանիշներ, որոնք բնութագրում են ՎՆՀ-ի վիճակը և նրա առանձին բաժինների փոփոխությունները, ինչպես նաև տեղեկություններ են պարունակում սրտի ինքնավարության մասին, արտացոլում ծոցային հանգույցի կարգավորման համակարգում ընթացող գործընթացների բնույթը և օրգանիզմի հարմարման մակարդակն ամբողջությամբ [10, 14]:

Վարիացիոն պուլսաչափական մեթոդը հնարավորություն է տալիս գրանցել նաև նյարդահումորալ հավասարակշռության տեղաշարժը, սիմպարիկ և պարասինվածքիկ նյարդային ու հումորալ օղակների մասնակցության աստիճանը՝ սրտի ռիթմի կծկումների վրա և կարգավորման կենտրոնացման աստիճանը:

Սույն հետազոտության նպատակն է եղել ուսումնասիրել Իրանի՝ Սարի քաղաքի տաղանդավոր երեխաների ուսուցման, դպրոցների 9-րդ դասարաններում սովորող աղջիկների և պատանիների սրտի ռիթմի և հոգեֆիզիոլոգիական ցուցանիշների փոփոխությունները տարեկան ուսումնական ծանրաբեռնվածության պայմաններում:

Հետազոտության մեթոդները: Հետազոտությունները կատարվել են Չահիդ Բեհեշտիի անվան տաղանդավոր երեխաների ուսուցման աղջիկների և տղաների դպրոցներում: Հետազոտվել են ավագ դպրոցների 9-րդ դասարանում սովորող 20-ական աղջիկների և տղա (15 տարեկան): Հետազոտության խնդիրների համաձայն, իրականացվել է աշակերտների առողջական տվյալների նախնական վերլուծություն ու ընտրվել են առողջական շեղումներ չունեցող աշակերտներ կամավոր սկզբունքներով, որոնց նախօրոք տեղեկացվել է իրականացվող հետազոտությունների էության մասին: Հետազոտվողների անհատական հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունները բացահայտելու նպատակով՝ Ս. Սալիլերգեր-Խանինի հարցաթերթիկով, որոշվել է նրանց անհանգստության աստիճանը: Ըստ ԻԱՏ-ի, գնահատվել է ինքնազարդողության (Ի), ակտիվության (Ա), տրամադրության (Տ) մակարդակները, և Դ. Այգեմի հարցաթերթիկով որոշվել է նեյրոտիզմի մակարդակը:

Աշակերտների սրտի ռիթմի վերլուծության նպատակով, գրանցվել է նրանց էլեկտրաստագիրը (ԷՍԳ) առաջին ստանդարտ արտածմամբ պառ-

կած վիճակում: ԷՍԳ-ի ազդակներն էլեկտրասրտագրիչից վերափոխվելով ձայնային հաճախության, փոխսանցվել են մագնիսոֆոնի ելքին, ապա ավտոմատ թվային վերափոխչով՝ համակարգչին, որտեղ վերամշակվել են համակարգչային հատուկ կազմված ծրագրով՝ համաձայն Ո. Բաևսկու (1984) վարիացիոն պոլիազաֆիման չափանիշների: Ծրագրի մաթեմատիկական բլոկում ստացված կարդինալներվալոգրերը (ԿԻԳ) ենթարկվել են հատուկ մշակման ու դրա արդյունքում յուրաքանչյուր հետազոտվողի համար գրանցվել են սրտի ռիթմի հիմունքավիկական, ռիթմագրային, սկատերգրային և սպեկտրային մեծություններին բնորոշող մի շարք ցուցանիշներ. մոդան (Mo), մոդայի տատանասահմանը (AMo), վարիացիոն թափը (ΔX), կարդինալներվալների տատանողականության գործակիցը (V_k):


Վարիացիոն պոլիազաֆիման տվյալների օգնությամբ հաշվարկվել են նաև սրտի ռիթմի հետևյալ ինտեգրալային ցուցանիշները. կարգավորող համակարգերի լարվածության ցուցիչը՝ $L3 = AMo/2\Delta X \cdot Mo$, վեգետատիվ հավասարակշռության ցուցիչը՝ $V23 = AMo/\Delta X$, ռիթմի վեգետատիվ ցուցիչը՝ $\Omega \cdot V3 = 1/Mo \cdot \Delta X$, կարգավորման գործընթացների աղեկվատության ցուցիչը՝ $ԿԳԱՅ3 = AMo/Mo$:

Հետազոտությունները կատարվել են տարեկան 3 անգամ՝ հոկտեմբերին (Երանում ուսումնական տարվա սկիզբն է), դեկտեմբերին և մայիսին (ուսումնական տարվա վերջը), այսինքն՝ քննություններից և արձակուրդներից հեռու ընկած շրջաններում, եթե աշակերտների վրա ուսումնական ծանրաբեռնվածությունն ավելի ուժեղ է արտահայտված, քան այլ գործուներինը:

Ստացված տվյալների վիճակագրական մշակումը կատարվել է ըստ Սայուլենսի՝ t չափանիշի Biostat համակարգչային ծրագրով:

Արդյունքները և քնննարկում: Յուրաքանչյուր հետազոտությունից առաջ իրականացվել է հետազոտվողների տեստավորում՝ ըստ Սպիլբերգեր-Խանիսի և ԻԱՏ-ի ցուցանիշների: Այգենկի հարցաքերթիկով որոշվել է հետազոտվողների պատկանելիությունն էքստրա- և ինտրավերտներին, ինչպես նաև նեյրոտիզմի մակարդակը: Հետազոտությունների ընթացքում վերլուծության են ենթարկվել 4000 կարդինալներվալ: Յուրաքանչյուր հետազոտվողի համար կառուցվել են հիստոգրեր, սկատերգրեր, կատարվել է սրտի ռիթմի սպեկտրային, ռիթմագրային վերլուծություն:

Իններորդ դասարանցիների տեստավորման արդյունքում բացահայտվել է տղաների մեծամասնության (70%) պատկանելիությունը էքստրավերտներին, իսկ աղջիկների 60%-ը՝ ինտրավերտներին բնորոշ է եղել անհատական անհանգստության (ԱԱ) միջին մակարդակ ($30 < \text{ԱԱ} < 45$ միավոր) և հիմնականում եղել են սանգվինիկներ և խոլերիկներ: Ինտրավերտները հիմնականում պատկանել են ֆլեգմատիկներին և մելանիոլիկներին: Անհատական անհանգստության համեմատարար բարձր մակարդակ (≥ 45 միավոր) հիմնականում գրանցվել է տղաների մոտ: Աղջիկների ԱԱ-ի ցուցիչը կազմել է $30,8 \pm 1,7$, իսկ տղաներինը՝ $36,6 \pm 2,4$ միավոր: Աղջիկների



Նկ. 1: Իններորդ դասարանում տվյալների աղջիկների և տղաների պատկանելիությունը էքստրավերտների և ինտրավերտների:

(≥ 45 միավոր) հիմնականում գրանցվել է տղաների մոտ: Աղջիկների ԱԱ-ի ցուցիչը կազմել է $30,8 \pm 1,7$, իսկ տղաներինը՝ $36,6 \pm 2,4$ միավոր: Աղջիկների

16,7%-ին բնորոշ է եղել ԱԱ-ի ցածր մակարդակ ($21,1 \pm 1,2$ միավոր), միջին՝ 48,8%-ին ($32,3 \pm 3,2$ միավոր) և բարձր՝ 34,5%-ին ($47,2 \pm 2,4$ միավոր): Տղաների խմբում ԱԱ-ի բարձր մակարդակ ունեցել են 36,1% հետազոտվողները ($36,4 \pm 3,0$ միավոր), միջին մակարդակ՝ 57,6% ($36,4 \pm 3,0$ միավոր) և ցածր՝ 6,3%-ը ($22,8 \pm 3,1$ միավոր): Աղջկներին հիմնականում բնորոշ է եղել ինքնագնահատման միջին, իսկ տղաներին բարձր մակարդակ: Հետազոտված աղջկների 60%-ին բնորոշ է եղել նեյրոտիզմի ցածր մակարդակ (բարձր հուզային կայունություն ≤ 7 միավորից), 40%-ին՝ միջին մակարդակ (9–13 միավոր): Տղաների 80%-ին բնորոշ է եղել նեյրոտիզմի բարձր մակարդակ (հուզային ցածր կայունություն ≥ 15 միավորից), 20%-ին՝ միջին մակարդակ (նկ. 2):



Իններորդ դասարանի աշակերտների սրտի ռիթմի ակտիվության սեռատարիքային ցուցանիշների ուսումնասիրությունն ուսումնական ծանրաբեռնվածության դիմամիկայում ցույց է տվել, որ տարվա սկզբում աղջկների սրտի գործառական վիճակը կարդիոհիբնազրի տվյալներով ($L_3=101,36 \pm 5,63$ պ.մ.) տղաների համեմատությամբ ($L_3=121,48 \pm 10,04$ պ.մ.) առավել բարեհաջող է (տես աղյուսակը):


*Իններորդ դասարանի աշակերտների սրտի ռիթմի ցուցանիշների փոփոխությունները
ուսումնական տարվա դիմամիկայում*

Ցուցանիշներ	Հնկանմբեր		Դնկանմբեր		Մայիս	
	աղջկներ	տղաներ	աղջկներ	տղաներ	աղջկներ	տղաներ
L_3 (պ.մ.)	$101,36 \pm 5,63$	$121,48 \pm 10,04$	$94,82 \pm 4,06$ $p < 0,05$	$108,24 \pm 6,95$ $p < 0,02$	$98,86 \pm 4,01$	$116,48 \pm 4,52$ $p < 0,05$
AMo (%)	$45,11 \pm 1,52$	$48,60 \pm 3,02$	$44,42 \pm 1,16$	$41,12 \pm 2,36$ $p < 0,05$	$43,90 \pm 1,89$	$46,01 \pm 1,16$ $p < 0,05$
Mo (վրկ)	$0,72 \pm 0,01$	$0,65 \pm 0,01$	$0,74 \pm 0,02$	$0,70 \pm 0,03$ $p < 0,05$	$0,61 \pm 0,02$ $p < 0,01$	$0,60 \pm 0,01$ $p < 0,01$
ΔX (վրկ)	$0,32 \pm 0,18$	$0,28 \pm 0,01$	$0,37 \pm 0,12$ $p < 0,05$	$0,34 \pm 0,08$ $p < 0,05$	$0,35 \pm 0,14$ $p < 0,01$	$0,27 \pm 0,04$ $p < 0,05$
$\Pi\cdot\Gamma\cdot\beta$ (պ.մ.)	$4,40 \pm 0,52$	$5,64 \pm 0,27$	$3,94 \pm 0,28$ $p < 0,05$	$4,80 \pm 0,46$ $p < 0,01$	$4,10 \pm 0,36$ $p < 0,05$	$5,60 \pm 0,56$ $p < 0,01$
$\Gamma\zeta\beta$ (պ.մ.)	$138,11 \pm 8,90$	$168,24 \pm 12,06$	$125,61 \pm 5,21$ $p < 0,05$	$149,20 \pm 11,82$ $p < 0,05$	$124,32 \pm 9,21$ $p < 0,05$	$159,90 \pm 12,4$
$\Psi\Omega\cdot\Gamma\beta$ (պ.մ.)	$60,40 \pm 5,01$	$66,54 \pm 3,01$	$59,81 \pm 4,06$	$61,50 \pm 3,05$ $p < 0,05$	$69,20 \pm 3,21$ $p < 0,01$	$64,62 \pm 4,48$
V_k	$11,40 \pm 0,33$	$8,07 \pm 0,21$	$13,01 \pm 0,32$ $p < 0,02$	$9,61 \pm 0,28$ $p < 0,05$	$11,68 \pm 0,38$ $p < 0,05$	$8,24 \pm 0,69$ $p < 0,05$
R-R միջ., վրկ	$0,69 \pm 0,01$	$0,71 \pm 0,02$	$0,70 \pm 0,02$	$0,75 \pm 0,02$	$0,73 \pm 0,03$ $p < 0,05$	$0,78 \pm 0,03$ $p < 0,02$
R-R միջ., վրկ	$0,56 \pm 0,01$	$0,60 \pm 0,01$	$0,59 \pm 0,01$ $p < 0,05$	$0,65 \pm 0,04$ $p < 0,05$	$0,56 \pm 0,02$ $p < 0,05$	$0,52 \pm 0,01$ $p < 0,01$
R-R մաքս., վրկ	$0,88 \pm 0,03$	$0,88 \pm 0,02$	$0,89 \pm 0,03$	$0,90 \pm 0,01$	$0,92 \pm 0,03$	$0,80 \pm 0,02$ $p < 0,05$

Մինչեռ, տղաների սիմպաթիկ ազդեցությունների մակարդակը և սրտի քրոնոտրոպ ֆունկցիայի կենտրոնական կարգավորումը եղել է ավելի բարձր, քան աղջկներինը, որն արտահայտվում է L3-ի և մնացած ինտեգրալային ցուցանիշների մեծությունների տարբերությամբ:

Աղջկների համեմատությամբ, տղաների սրտի ռիթմի վրա առավել արտահայտված է L3-ի սիմպաթիկ օղակի ազդեցությունը, որի պատճառով սիմպաթոտոնիկների մեջ գերակշռել են տղաները, իսկ վագոտոնիկների մեջ՝ աղջկները: Այնուամենայնիվ, սեռային երկու խմբերում էլ, հետազոտվողների սրտի լարվածության ցուցիչ մեծությունը գտնվել է հարմարողական փոփոխությունների սահմաններում ($60 < L3 < 150$ պ.մ., նորմոտոնիկներ): Այս առումով տղաները ֆիզիոլոգիական նորմայի վիճակում աղջկների համեմատությամբ բնութագրվում են անհատական անհանգստության և ինքնազնահատման բարձր մակարդակով: Ըստ Սպիլբերգերի, անհատական անհանգստության և L3-ի մեծության միջև վիճակագրորեն հավանական դրական համահարաբերակցություն հաստատվել է նաև այլ հեղինակների աշխատանքներում [15, 16]:

Ուսումնական ծանրաբեռնվածության տարեկան դինամիկայում (հոկտեմբեր, դեկտեմբեր, մայիս) կատարված հետազոտությունների արդյունքները վկայում են, որ սրտի ռիթմի լարվածության ցուցիչը համեմատարար ավելի բարձր է եղել ուսումնական տարվա սկզբին՝ հոկտեմբերին. աղջկների մոտ այն կազմել է $101,36 \pm 5,63$, իսկ տղաներինը՝ $121,48 \pm 10,04$ (տես աղյուսակը): L3-ի, AMo-ի, ΩՎՅ-ի, ՎՀՅ-ի, ԿԳ-ԱՅ-ի բարձր մեծություններն աղջկների և հատկապես տղաների մոտ, ինչպես նաև հումորալ և պարասիմպաթիկ կարգավորման ցածր ակտիվությունը (Mo , ΔX) վկայում են սրտային ռիթմի կարգավորման ավտոնոմ կոնտորի սահմաններում սիմպաթիկ օղակի բարձր ակտիվության մասին (նկ. 3):



Նկ. 3: 9-րդ դասարանում սովորող աղջկների և տղաների սրտի ռիթմի լարվածության ցուցիչի, մոդայի տասանահմանի, վեգետատիվ հավասարակշռության, կարգավորման գործնականության աղեկվատության, ցուցիչների փոփոխությունները տարեկան ուսումնական ծանրաբեռնվածության պայմաններում:

■ աղջկներ, ■ տղաներ

* – $p < 0,05$; ** – $p < 0,01$:

Դա հավանաբար, հետևանք է այն բանի, որ ամառային արձակուրդներից հետո, սովորողների օրգանիզմի ֆիզիոլոգիական համակարգերի հարմարումն ուսումնական ծանրաբեռնվածությանն իրականանում է կարգավորիչ մեխանիզմների լարվածությամբ: Հարկ է նշել, որ ուսումնասիրված սեռային երկու խմբերում էլ տարեկան կտրվածքով՝ հոլիստեմբերից մինչև մայիս, սրտի գործունեության կարգավորման մեխանիզմով գերակշռող է եղել կենտրոնական կոնտուրը: Սակայն, ի տարբերություն աղջիկների, տղաների V_{LZ} -ի սիմպաթիկ բաժնի ակտիվության տեղաշարժերը և կարգավորման կենտրոնական կոնտուրը ավելի արտահայտված են եղել: Մեր կարծիքով դա վկայում է, որ աղջիկներն ավելի համբերատար են և նստակյաց, առավել հեշտությամբ են հարմարվում կանոնավոր ուսումնական ծանրաբեռնվածություններին:

Ուսումնական տարվա ընթացքում, հատկապես դեկտեմբեր ամսին, արձանագրել է սրտային ռիթմի կանոնավորման կենտրոնական կոնտուրի ակտիվության որոշ իջեցում, որն արտահայտվել է LZ -ի նվազմամբ՝ աղջիկներինը՝ 6,5%-ով ($p<0,05$), տղաներինը՝ 10,9%-ով ($p<0,02$) (նկ. 3): Դա վկայում է տարվա առաջին կիսամյակի վերջում աղջիկների և հատկապես տղաների սիմպաթիկ նյարդային համակարգի ակտիվության նվազման մասին, որի ցայտուն արտահայտությունն է AMo -ի նվազումը համապատասխանաբար՝ 5,9 և 15,4%-ով նաև հումորալ ու պարասիմպաթիկ մեխանիզմների ակտիվության բարձրացման մասին: Դեկտեմբերին աղջիկների սրտի ռիթմի կարգավորման պարասիմպաթիկ Mo և ΔX ցուցանիշները մեծացել են 2,8 և 15,6%-ով ($p<0,05$): Միաժամանակ նկատվել է նաև V_{k} -ի մեծացում: Հետազոտված երկու խմբերում էլ V_{k} -ն համապատասխանաբար մեծացել է՝ 14,1% ($p<0,02$) և 18,9%-ով ($p<0,05$), իսկ $R-R$ միջինը, $R-R$ նվազագույնը և $R-R$ առավելագույնը հիմնականում տատանվել են հոլիստեմբերյան մեծությունների սահմանում կամ որոշակի մեծացման տեսնենց է նկատվել (տես աղյուսակը): Դեկտեմբերին սրտի ռիթմի կարգավորման պարասիմպաթիկ մեխանիզմների ակտիվության բարձրացումը պայմանավորված է ուսումնական ծանրաբեռնվածությամբ զարգացող հոգնածությամբ, որն առավել արտահայտված է տղաների մոտ: Դրա մասին են վկայում նաև ռիթմոգրերում դիտվող $R-R$ ինտերվալների տատանասահմանի մեծացումը, սպեկտրագրերում «ավտոռեզրեխիոն ամպի» խտության նորացումը, սպեկտրագրերում միջին և բարձր հաճախությամբ տատանումների մասնաբաժնի մեծացումն ու սպեկտրում շնչառական ալիքների ի հայտ գալը: Չնայած, երկու խմբերում էլ ուսումնական տարվա վերջին աստիճանաբար մեծանում է հոգնածությունը, այնուամենայնիվ, աղյուսակում ներկայացված սրտի ռիթմի ցուցանիշների հետևում է, որ մայիսին դիտվում է սիմպաթիկ նյարդային համակարգի ցուցանիշների (LZ , AMo) որոշ բարձրացում դեկտեմբերի համեմատությամբ և հունորական ակտիվության ու պարասիմպաթիկ կոնտուրի (Mo , ΔX) ցուցանիշների հետագա նվազում, սակայն շիամնելով ելակետային՝ հոլիստեմբերյան մակարդակին: Ըստ երևույթին, դա կապված է գարնանը դեռահասների օրգանիզմում ընթացող նեյրոներգատական տեղաշարժերի և մոտալութ քննությունների հետ, որոնք դեռահասներից պահանջում են հարմարողական մեխանիզմների ակտիվացում, մտավոր և հոգեկան լարվածություն: Ուսումնական տարվա ընթացքում սրտային ցուցանիշների փոփոխությունների համանման դինամիկա դիտվել է նաև Ա.Ա. Պատունովի [9] հետազոտություններում: Ֆ.Գ. Սիսիլիկովը [10] ուսումնասիրելով ավագ դասարանցիների և

առաջին կուրսի ուսանողների սիրտ-անորբային, սիմպաթոադրենալային համակարգերի ակտիվությունը, ուսումնական տարվա վերջում ևս բացահայտել են օրգանիզմի պահուտային հնարավորությունների մորիլիզացում ու լարվածություն:

Այսպիսով, տարեկան ուսումնական ծանրաբեռնվածության դինամիկայում գրանցվել են սիրտ-անորբային համակարգի գործունեության փուլային փոփոխություններ: Առաջին կիսամյակի վերջում՝ դեկտեմբերին գրանցվել է սրտի ռիթմի կարգավորող մեխանիզմների ակտիվության համեմատական թուլացում՝ սիմպաթիկ օղակի լարվածության նվազում, սրտի կծկումների հաճախության և հենմողինամիկայի հիմնական ցուցանիշների նվազում: Ուսումնական տարվա վերջին՝ մայիսին, զրանցվել է սիմպաթիկ նյարդային համակարգի մարկերների բարձրացում դեկտեմբեր ամսվա համեմատությամբ և հումորալ ու պարասիմպաթիկ օղակի ակտիվության իջեցում, որոնք առավել արտահայտված են տղաների մոտ: Ուստի, սովորողների հարմարողական հնարավորությունների բարձրացման, հոգեհորուկական լարվածության գործընթացների և հոգնածության զարգացման թուլացման նպատակով, անհրաժեշտ է ուսուցման գործընթացում վերանայել կրթական ծրագրերի բովանդակությունը և մերոդները՝ համապատասխան դպրոցականների օրգանիզմի ձևաբանագործառական տարիքային առանձնահատկություններին:

Ստուգվել է 14.06.2011

Գ.ՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Рахманин Ю.А., Ушаков И.Б., Соколова Н.В., Рапопорт И.К.** // Гигиена и санитария, 2010, № 2, с. 67–70.
- Сетко Н.П.** // Гигиена и санитария, 2009, № 4, с. 9–10.
- Ушакова М.А.** // Гигиена и санитария, 2008, № 5, с. 59–62.
- Вандышев А.Е.** В сб. материалов Всероссийского конгресса по школьной и университетской медицине. М., 2010, с. 122–124.
- Вирабова А.Р., Кучма В.Р.** // Гигиена и санитария, 2006, № 1, с. 74–75.
- Сафронова А.И., Вахмистрова А.В., Никулин В.Н., Каримова Л.Н.** // Гигиена и санитария, 2009, № 4, с. 55–58.
- Беренштейн Г.Ф., Нурбаева Н.И.** // Гигиена и санитария, 1993, № 4, с. 35–36.
- Панкова Н.Б., Богданова Е.В., Любина Б.Г. и др.** // Физиология человека, 2009, т. 35, № 3, с. 64–73.
- Псеунок А.А.** // Вестник Адыгейского гос. университета, 2009, № 1, с. 78–83.
- Сидиков Ф.Г., Шайхелисламова М.В., Валеев И.Р.** // Физиология человека, 2001, т. 27, № 5, с. 60–67.
- Hojgard M.V., Holstein-Rathlou W.H., Anger E., Kanters I.K.** // Am. J. Physiol., 1998, v. 275, № 1, Pt 2, p. 213–217.
- Karemaker I.M.** // J. Physiol., 1999, v. 517, p. 316–319.
- Кузнецова О.В., Соњкин В.Д.** // Физиология человека, 2009, т. 35, № 6, с. 94–102.
- Giagkoudaki F., Dimitros E., Kouidi E., Deligiannis A.** // J. Sport Rehabil., 2010, v. 19, № 2, p. 173–183.
- Криволапчук И.А.** В сб. материалов Всероссийского конгресса по школьной и университетской медицине. М., 2010, с. 313–316.
- Никитин Ю.П., Денисова Д.В., Завьялова Л.Г., Симонова Г.И.** // Бюллетень СО РАМН, 2003, т. 108, № 2, с. 29–37.

С. М. МИНАСЯН, Э. С. ГЕВОРКЯН, РЕЗА ГОЛИСКАРДИ

МАТЕМАТИЧЕСКИЙ АНАЛИЗ ИЗМЕНЕНИЙ РИТМА СЕРДЦА В УСЛОВИЯХ УЧЕБНОЙ НАГРУЗКИ

Резюме

Исследованы психофизиологические показатели девочек и мальчиков 9-х классов школ одаренных детей города Сари Ирана. Компьютерной программой методом вариационной пульсометрии Р. Баевского проанализированы интегральные показатели ритма сердца учащихся. Психофизиологическое тестирование показало, что большинство мальчиков экстраверты, а девочек – интроверты. Мальчикам были характерны более высокие показатели уровней личностной и ситуационной тревожности, чем девочкам. В динамике учебного года как у девочек, так и у мальчиков наблюдались фазные изменения работы сердца. В декабре отмечено относительное понижение активности регуляторных механизмов ритма сердца – падение напряжения симпатического контура регуляции. В конце учебного года (в мае) повышалась активность маркеров симпатической нервной системы и понижалась активность парасимпатического и гуморального каналов регуляции ритма сердца, наиболее выраженная у мальчиков.

S. M. MINASYAN, E. S. GEVORKYAN, REZA GOLISKARDI

MATHEMATICAL ANALYSIS OF HEART RHYTHM CHANGES DURING STUDY LOADING

Summary

Psychophysiological parameters of girls and boys (9-grade) were studied at school for gifted children of Sari City of Iran. Students' integral indices of heart rate were analyzed by means of the computer program method of variation pulsometry of R. Baevsky. Psychophysiological testing showed that most of boys are extroverts and girls are introverts. Boys were characterized having higher levels personal and situational anxiety than girls. In the dynamics of the school year phase changes of heart rate were observed both in girls and boys. In December there was a relatively decrease in activity of the regulatory mechanisms of cardiac rhythm – decreasing of the sympathetic circuit voltage regulation. At the end of the academic year (in May) activity of the markers of SNA increases and parasympathetic activity of channels and humoral heart rate regulation decreases, which is mostly pronounced among boys.